## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

---

**ԳՐ. ՄԻՆԱՍ ՉԵՐԱԶ.** *Լոնդոնում հրատարակւող անգլօ-ֆրանսիական* „l'Arménie“ *կիսամսեայ թերթի տաղանդաւոր և եռանդոտ խմբագիր-հրատարակիչը, մի մասնաւոր նամակով, մեզ ուղղած, հաղորդում է, որ սեպտեմբեր ամսից ի վեր նա սկսել է հրատարակել հայկական ամսագիրների պարունակութիւնը անգլիական* Review of Reviews (*Տեսութիւն ամսագիրների*) *հանդէսի մէջ։*

**ՎՐԻՊԱԿՆԵՐ** *«Մուրճ»-ի անցեալ* № 11-*ում. Առաջնորդողում, երես* 1496 *տող* 13—14 *պէտք է լինէր՝ պայմաններ կը ստեղծի ապագայում աւելի մեծ խնդիրներին հասունացած ինտելլիգենցիայի համար։*

*Թղթակցութիւններ արտասահմանից բաժնի մէջ, երես* 1610, *տպած է Ֆրարսիայի պետական բիւջէտի վերաբերեալ, թէ*

*«*1869 *թւականին պետական ծախքն էր* 1.847.000 *ֆր.*
1891 *թւականին պետ. ծախք կը լինի* 3.247.000 *ֆր.»,*

*մինչդեռ այդ թւերից երեք զէրօներ պակաս են, այնպէս որ պէտք է լինէր՝* 1.847.000.000 (*մի միլլիարդ* 847 *միլլիօն*) *և* 3.247.000.000 (3 *միլլիարդ* 247 *միլլիօն*)*։*

*Թիֆլիսի մեծ տնատէրերի ցուցակում, երես* 1597 № 60-*ը պէտք է լինէր Փիթոյեան Կոնստանտին և ոչ Փիթոյեան Իսահակ։*

**ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻ ՍԲ. ՇՄԱՒՈՆ ԵԿԵՂԵՑՈՒ** *համար հրաւիրւում է քահանայ, առնւազը Ներսիսեան դպրոցում աւարտածներից։ Դիմել «Մուրճ»-ի խմբագրութեան։*

**ԿՈԽԻ ԳԻՒՏԻՆ** *վերաբերեալ յօդւածների շատութեան և նոցա տպագրութեան անյետաձգելիութեան պատճառով, ներկայ* № 12 *ից ակամայ բաց թողինք այդ №-ի համար նշանակւած մի քանի գրւածքներ։*

**ՀԵՂԻՆԷ** *վէպի երկրորդ մասը կ'սկսի տպագրւել* 1891 *թ.* №-1-*ից։ Կըրկնում ենք, որ նոր բաժանորդները ձրի կը ստանան Հեղինէի առաջին մասը, որ տպագրւած էր «Մուրճ»-ում՝* 1890 *թւականի ընթացքում։*

«ՄՈՒՐՃ» ԱՄՍԱԳՐԻ ՁՐԻ ԲԱԺԱՆՈՐԴ *գրուելու խնդիրքներ տուողներին, որպէս անցեալ տարի. Նոյնպէս և այժմ յայտարարում ենք հետեւեալը. Ձրի բաժանորդագրութիւն ամենևին չի ընդունւում «Մուրճ»-ի խմբագրութեան մէջ, մինչև որ բաժանորդագրութիւնը չ'անցնի* 650 *թիւը։ Ձրի բաժանորդ գրուելու խնդիրքները կը յարգուեն այն չափով միայն, որչափով խմբագրութիւնը աւելորդ բաժանորդագներ ստացած կը լինի կողմնակի անձերից։*

ՆԱՄԱԿՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ *վերնագրով «Մուրճ»-ում տպւող շարք յօդուածները («Մուրճ»,* 1890 №№ 11 *և* 12)*, ծանօթացնելով «Մուրճ»-ի ընթերցողներին ռուսաց պետական և հասարակական կեանքի, դորա հետ մասին նաև պարբերական մամուլի վերջին* 25—30 *տարիների ամենագըլխաւոր խնդիրների հետ, գալ* 1891 *թուականին կը փոխարկուեն* Ռ *ո ւ ս ա ց  ք ր ո ն ի կ ի. Վերջինիս նշանակութիւնը կը լինի «Մուրճ»-ի ընթերցողներին յընթացիկս պահել այն ամենի հետ, ինչ կարևոր բան է կատարւում ռուսաց թէ պետական ու հասարակական կեանքում և թէ գրականութեան ու պարբերական մամուլի մէջ։*

ՆՈՐ ԳՐՔԵՐ. *Վերջին ժամին ստացանք՝*

**ТИГРАНОВЪ, ЯКОВЪ.**—„Къ вопросу объ административной юстиціи въ Россіи“ (по поводу пересмотра Городоваго Положенія). Приложеніе къ Протоколу № 17 засѣданія Кавказскаго Юридическаго Общества.

**СТУПИНЪ**, А. Д. „Современный календарь на 1891-й годъ“. *գինն է* 15 *կոպէկ.*